



Հիմնական տնտեսական միտումները Հայաստանում

Հոկտեմբեր 2005

Ներկայացվում են 2005 թվականի հոկտեմբերի դրությամբ առկա վերջին ամսական ցուցանիշները: ՀՆԱ-ի, համախառն թողարկման, պետական բյուջեի, արտաքին հատվածի վերջին թարմ տվյալները վերաբերում են հունվար-օգոստոս ամիսներին, իսկ ֆինանսական, արտարժույթային և սպառողական շուկաների ցուցանիշները՝ սեպտեմբերին:

Ելենա Մանուկյան

Հրատարակվում է «Օքսֆամ» ՄԲ աջակցությամբ



Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ամփոփում

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-օգոստոսի ցուցանիշներ			
Իրական հատված							
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	739.6	874.4	1,106.7	383.6	444.9	557.2	784.2
ՀՆԱ-ի իրական աճ (%)	13.2	14.0	10.1	9.8	14.8	9.7	11.7
Արդյունաբերության աճ (%)	13.9	15.6	2.1	9.7	19.2	3.2	5.9
Գյուղատնտեսության աճ (%)	3.8	4.2	14.5	1.2	0.1	14.4	11.8
Շինարարության աճ (%)	41.5	45.5	13.4	36.4	55.6	12.5	31.2
Տրանսպորտ և կապի աճ (%)	-1.7	8.3	16.9	3.3	10.4	15.4	10.1
Առևտուր և հանրային սննդի աճ (%)	19.7	14.1	10.5	14.8	13.6	9.2	6.9
Ծառայությունների աճ (%)	12.0	8.6	12.1	6.0	6.5	14.9	10.0
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%)	0.7	4.6	6.0	0.9	3.4	7.3	5.7
Սպառողական գների ինդեքս (d/2 միջին, %)	1.1	4.7	7.0	1.1	3.8	7.9	0.9
Հարկաբյուջետային հատված (պետական բյուջեի ցուցանիշներն ըստ ֆինանսավորման)							
Հարկային եկամուտներ (մլրդ դրամ)	185.4	212.2	250.1	114.4	128.4	152.3	184.3
Ծախսեր (մլրդ դրամ)	235.8	242.0	295.9	142.5	151.1	173.6	226.4
Դեֆիցիտ (մլրդ դրամ)	7.8	-8.1	-2.0	5.1	1.8	-4.5	-0.6
Հարկային եկամուտներ (ՀՆԱ-ի %)	13.6	13.1	13.2	16.3	15.4	15.5	15.9
Ծախսեր (ՀՆԱ-ի %)	17.3	14.9	15.6	20.3	18.1	17.7	19.5
Դեֆիցիտ (ՀՆԱ-ի %)	0.6	0.5	0.1	0.7	0.2	0.5	0.1
Արտաքին հատված							
Արտահանում (ՖՕԲ, մլն ԱՄՆ դոլար)	505.2	685.6	715.0	299.3	443.2	446.2	603.8
Ներմուծում (ՍԻՖ, մլն ԱՄՆ դոլար)	987.2	1,279.5	1,351.0	579.1	826.1	838.9	1,085.4
Առևտրային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)	-482.0	-593.9	-635.9	-279.8	-382.8	-392.7	-481.7
Արտահանման աճ (%)	47.8	35.7	4.3	na	48.1	0.7	35.3
Ներմուծման աճ (%)	12.5	29.6	5.6	na	42.6	1.6	29.4
Առևտրային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	20.3	21.2	17.9	22.7	26.8	21.9	19.1
Դրամավարկային հատված							
Փողի զանգված (d/2 վերջ, մլրդ դրամ)	203.1	233.8	285.9	164.4	208.1	247.0	346.0
ՀՀ ԿԲ շուկա արտաքին ակտիվներ (մլրդ դրամ)	123.7	157.8	168.9	87.2	144.4	144.6	232.4
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն*	6.7	6.9	6.6	4.3	4.0	4.0	3.4
Փողի բազմարկիչ	2.0	2.1	2.2	1.9	2.0	2.2	1.9

* Հաշվարկվել է որպես անվանական ՀՆԱ-ի և փողի զանգվածի հարաբերություն:
Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Ֆինանսական, արտաբյուջային և սպառողական շուկաներ (սեպտեմբեր)

	2002	2003	2004	2005-ի ամսական ցուցանիշներ									
	տարեկան ցուցանիշներ			Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	
Պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերություն (%)													
9-12-ամսյա ՊԿՊ-ներ	15.6	9.7	-	-	4.3	3.9	3.7	4.9	-	-	3.2	3.8	
Միջնաժամկետ մասնակի մարումներով	19.7	-	5.6	6.0	4.6	4.6	5.3	4.9	5.7	5.3	5.1	-	
ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույք	19.0	18.0	16.0	16.0	16.0	16.0	16.0	16.0	18.0	18.0	17.0	17.0	
Վարկերի տոկոսադրույքներ	18.8	20.9	18.2	17.0	18.8	19.1	16.6	18.9	18.0	18.4	18.4	17.7	
Ավանդների տոկոսադրույքներ	4.2	6.4	4.4	4.1	6.1	5.9	5.8	5.6	6.1	6.0	6.2	6.5	
Դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքի աճ (%)	3.3	0.9	-7.8	1.1	-3.7	-1.6	-3.9	0.3	-0.1	-1.4	4.1	-1.4	
Դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեք (d/2 վերջ)	584.9	566	485.8	478.5	471.2	458.1	439.3	445.1	442.3	447.7	468.3	444.2	
Դրամ / ԵՎՐՈ փոխարժեք (d/2 վերջ)	606.9	702.2	661.1	623.3	620.4	593.0	566.9	555.1	533.2	541.7	570.5	535.9	
Դրամ / ՌԴ ռուբլի փոխարժեք (d/2 վերջ)	18.3	19.2	17.5	17.1	17.0	16.5	15.8	15.8	15.4	15.6	16.4	15.6	
Սպառողական գների ինդեքս (d/2 վերջ, %)	2.0	8.6	2.0	5.4	-0.7	-0.9	-0.9	0.1	-1.4	-4.5	-1.4	0.9	
Պարենային ապրանքներ*	1.2	6.1	9.9	7.7	-0.6	-1.4	-1.3	0.0	-2.1	-6.4	-2.2	0.9	
Ոչ պարենային ապրանքներ	0.2	1.9	0.6	0.8	-0.3	-0.4	-0.2	-0.3	-0.1	-0.2	0.4	1.7	
Ծառայություններ	1.1	1.9	1.5	0.2	-1.4	0.6	0.1	1.0	0.4	-0.2	0.4	0.5	

* Ներառյալ ռաբլից խմիչք և ծխախոտ:
Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ԿԲ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Հիմնական միտումները

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն աճել է շուրջ 41 տոկոսով

2005 թվականի առաջին ութ ամիսների դրությամբ տնտեսական աճը կազմեց 11.7 տոկոս՝ 2 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արդյունքները: Միևնույն ժամանակ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ավելացավ 227 ԱՄՆ դոլարով, ընդ որում միայն օգոստոսի ընթացքում մոտ 52 ԱՄՆ դոլարով:

Տնտեսական աճին առավել նպաստեցին շինարարության, գյուղատնտեսության և ծառայությունների ճյուղերը, համապատասխանաբար, 4.3, 2.3 և 1.9 տոկոսային կետերով: Աճի առավել բարձր ցուցանիշներով դարձյալ աչքի ընկան շինարարության և գյուղատնտեսության ճյուղերը՝ 31.2 և 11.8 տոկոս համապատասխանաբար: Նվազագույն աճը՝ 5.9 տոկոս գրանցվեց արդյունաբերության ճյուղում:

Հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կայուն են և զիջում են 2002-ի մակարդակին

ՀՀ ՖԷՆ նախնական տվյալների համաձայն 2005 թվականի հունվար-օգոստոսին պետական բյուջեի եկամուտները գերազանցեցին նախորդ տարվա ցուցանիշը՝ 27.5 տոկոսով՝ կազմելով երկրի համախառն ներքին արդյունքի 19.6 տոկոսը: Չնայած պետբյուջեի ծախսերի աճը փոքր ինչ առաջանցիկ էր եկամուտների նկատմամբ, այնուամենայնիվ ձևավորվեց 597.4 միլիոն դրամի հավելուրդ:

Հարկային եկամուտները աճեցին 21.0 տոկոսով, որն առավելապես ԱԱՀ-ից և շահութահարկից մուտքերի, համապատասխանաբար, 20.1 և 67.9 տոկոսով աճերի արդյունք էր:

Պետբյուջեի եկամուտների աճի վրա առավել բացասաբար անդրադարձավ ակցիզային հարկից մուտքերի անկումը. թեև օգոստոսին այդ հարկատեսակից մուտքերը գերազանցեցին նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 13.1 տոկոսով, այնուամենայնիվ, հունվար-օգոստոսի կուտակային ցուցանիշը 7.1 տոկոսով զիջեց նախորդ տարվա նույն ցուցանիշին:

Հունվար-օգոստոսին պետբյուջեի ծախսերը մեկ երրորդով գերազանցեցին նախորդ տարվա մակարդակը: Միջոցների շուրջ կեսն ուղղվեց պաշտպանության, կրթության և գիտության, ինչպես նաև սոցիալական ապահովագրության և ապահովության ոլորտներին: Առավելապես ավելացավ կրթության և գիտության ոլորտի ֆինանսավորումը՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 39.3 տոկոսով:

Նախորդ տարվա նկատմամբ հունվար-օգոստոսին կրճատվեցին տոկոսավճարները ներքին և արտաքին պարտքերի դիմաց, ինչպես նաև սուբսիդիաները: Մյուս կողմից գրեթե եռապատկվեցին կապիտալ ծախսերը, իսկ ծախսերի հիմնական ուղղությունը հանդիսացող ապրանքների և ծառայությունների գնումներն ավելացան 16.5 տոկոսով:

Արդյունքում, թեև 2005-ի առաջին ութ ամիսների դրությամբ ՀՆԱ-ի նկատմամբ եկամուտներն ու ծախսերը գերազանցեցին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշները, սակայն նրանք դեռևս զիջում են 2002-ի նույն ժամանակահատվածի ցուցանիշներին::

Առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը խորացել է

2005-ի հունվար-օգոստոսին արտահանումն աճեց 35.3 տոկոսով, որը առավելապես արդյունք էր ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի գծով ծավալների եռապատկման: Արտահանման աճի վրա առավել բացասաբար անդրադառնալով հանքահումքային արտադրանքի արտահանման ծավալների մոտ քառորդով կրճատումը:

Նույն ժամանակահատվածում ներմուծումն աճեց 29.4 տոկոսով, որը մեծապես պայմանավորվեց թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի գծով

ծավալների 28.5 տոկոս աճով, ինչպես նաև հանքահումքային արտադրանքի՝ 35.6 տոկոս և տրանսպորտային միջոցների՝ 65.1 տոկոս ավելացմամբ:

Այնուամենայնիվ ՀՆԱ-ի նկատմամբ և՛ արտահանման, և՛ ներմուծման կշիռները նվազեցին, համապատասխանաբար, 4.0 և 8.2 տոկոսային կետերով: Ընդ որում ներմուծման կշռի՝ արտահանման նկատմամբ առավել նվազելը պայմանավորեց ՀՆԱ-ի նկատմամբ առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի 2.8 տոկոսային կետով կրճատումը:

Ընդհանուր առմամբ 2005-ի առաջին ութ ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը խորացավ 22.6 տոկոսով:

Դրամով ավանդների աճն առաջանցիկ է արտարժույթով ավանդների համեմատ

Փողի զանգվածն օգոստոսի վերջին՝ հուլիսի համեմատ ավելացավ 5.9 տոկոսով կամ 19.3 միլիարդ դրամով, որից 14.2 միլիարդ դրամը կազմեց արտարժույթով ավանդների ավելացումը: Միևնույն ժամանակ դրամով ցպահանջ ավանդները կրճատվեցին 2.4 միլիարդ դրամով:

Նախորդ տարվա համեմատ օգոստոսի վերջին փողի զանգվածը գերազանցեց նույն ցուցանիշը 40.1 տոկոսով: Շրջանառության մեջ կանխիկն աճեց 42.6 տոկոսով կամ 37 միլիարդ դրամով, իսկ արտարժույթով ավանդները՝ 28.6 տոկոսով կամ 35.1 միլիարդ դրամով: Դրամով ավանդների աճը մոտ 2.5 անգամ առաջանցիկ էր արտարժույթով ավանդների աճի համեմատ:

Օգոստոսի վերջին ՀՀ ԿԲ զուտ արտաքին ակտիվներն աճել են 60.7 տոկոսով նախորդ տարվա օգոստոսի համեմատ

Հայկական դրամի արժեզրկումը կարճաժամկետ բնույթ կրեց

Արտարժույթային շուկայում օգոստոսին տեղի ունեցած հայկական դրամի արժեզրկումը ժամանակավոր բնույթ կրեց, և արդեն իսկ սեպտեմբերին դրամը դարձյալ արժեքավորվեց բոլոր հիմնական արտարժույթների նկատմամբ:

Օգոստոսին ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի առավելագույն ցուցանիշը կազմեց 478 դրամ: Սեպտեմբերի ընթացքում շարունակ արժեքավորվելով օրեկան միջինում 1.1 դրամով՝ ամսվա վերջի դրությամբ փոխարժեքը կազմեց 444.2 դրամ: Արդյունքում սեպտեմբերին հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմեց 454.4 դրամ, 2004-ի սեպտեմբերի 513.4 դրամի դիմաց:

2005-ի սեպտեմբերի վերջի դրությամբ դրամի փոխարժեքը նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ արժեքավորվեց՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ 8.6 տոկոսով, ռուսական ռուբլու նկատմամբ՝ 11.0 տոկոսով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 18.9 տոկոսով:

Ամառային գնակումների շրջանն ավարտվեց

2005 թվականի սեպտեմբերին սպառողական շուկայում տեղի ունեցավ գների 0.9 տոկոսով աճ: Հատկապես բարձր էր ոչ պարենային ապրանքների գնաճը՝ 1.7 տոկոս: Այս ապրանքախմբի կազմում նախորդ ամսվա նկատմամբ գներն առավելապես աճեցին անձնական օգտագործման մեքենաների և բենզինի գծով՝ 12.8 տոկոսով, գրենական պիտույքների գծով՝ 2.2 տոկոսով, ինչպես նաև ոսկերչական իրերի գծով՝ 1.4 տոկոսով:

Պարենային ապրանքների կազմում օգոստոսի համեմատ առավել թանկացան բանջարեղենն ու կարտոֆիլը՝ 8.3 տոկոսով, շաքարավազը՝ 3.4 տոկոսով: Հատկապես հուշագրավ է ձվի 6.2 տոկոսով գնաճը, որի գինը փետրվարից մինչ այդ շարունակ նվազում էր: Միևնույն ժամանակ իջան ձկնամթերքի և մրգի գները, համապատասխանաբար, 4.8 և 3.6 տոկոսով:

Ծառայությունների կազմում 5.4 տոկոսով թանկացան կրթության համակարգի, 3.4 տոկոսով՝ մշակույթի ոլորտի և 1.6 տոկոսով՝ միջքաղաքային տրանսպորտի ծառայությունները:

Հունվար-օգոստոս ամիսներին ՀՆԱ-ի դեֆլյատորը կազմեց 5.7 տոկոս՝ հունվար-հուլիսի համեմատ ավելանալով 1.5 անգամ:

Հիմնական բյուջետային ցուցանիշներ

միլիարդ դրամ, ըստ ֆինանսավորման

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-օգոստոսի ցուցանիշներ			
Պետբյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	228.0	250.1	297.9	137.4	149.3	178.0	227.0
Ընդամենը եկամուտներ	211.3	240.2	288.2	132.2	145.7	173.4	223.9
Ընթացիկ եկամուտներ	209.5	237.0	279.1	131.4	143.4	172.1	217.6
Հարկային եկամուտներ, այդ թվում	185.4	212.2	250.1	114.4	128.4	152.3	184.3
Ավելացված արժեքի հարկ	95.0	107.8	117.9	58.5	66.2	72.1	86.6
Շահութահարկ	17.4	17.6	32.0	11.8	10.1	17.6	29.5
Եկամտահարկ	12.5	16.8	20.4	7.4	10.2	13.0	15.8
Ակցիզային հարկ	35.3	39.1	40.7	21.3	24.1	26.1	24.2
Պետական տուրք	13.2	15.2	16.9	8.7	10.1	11.3	11.2
Ոչ հարկային եկամուտներ	10.9	9.5	12.0	8.2	4.9	8.5	22.1
Կապիտալ եկամուտներ	1.8	3.2	9.1	0.9	2.3	1.3	6.3
Պաշտոնական տրանսֆերտներ	16.7	9.9	9.7	5.2	3.6	4.6	3.1
Պետբյուջեի ծախսեր	235.8	242.0	295.9	142.5	151.1	173.6	226.4
Պաշտպանություն	36.8	44.3	52.5	27.0	29.3	35.1	42.6
Հասարակական կարգի պահպանություն	15.9	19.9	23.2	9.7	12.1	13.5	18.1
Կրթություն և գիտություն	29.1	32.9	45.2	16.4	19.9	24.9	34.7
Առողջապահություն	14.8	18.9	24.3	5.5	11.2	12.7	17.3
Սոց. ապահովագրություն և ապահովություն	23.8	29.3	35.3	17.8	17.9	22.5	28.3
Ընթացիկ ծախսեր	210.4	214.5	252.8	121.4	136.2	153.6	183.7
Աշխատավարձ	20.9	13.9	24.3	12.2	6.5	14.5	19.5
Տոկոսավճարներ	15.7	11.3	9.8	9.3	7.8	6.5	5.9
Սուբսիդիաներ	8.2	15.1	18.4	6.5	10.1	13.4	11.1
Ընթացիկ տրանսֆերտներ	47.8	43.9	60.1	27.7	27.0	33.1	46.8
Ապրանքներ և ծառայություններ	117.8	130.3	140.1	65.8	84.8	86.1	100.3
Կապիտալ ծախսեր	13.6	21.6	32.7	7.0	9.5	13.1	34.0
Վարկավորում հանած մարում	11.8	5.8	10.5	14.1	5.5	6.9	8.7
Դեֆիցիտի ֆինանսավորում	7.8	-8.1	-2.0	5.1	1.8	-4.5	-0.6

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ, ըստ ֆինանսավորման

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-օգոստոսի ցուցանիշներ			
Հարկային եկամուտներ, այդ թվում	13.6	13.1	13.2	16.3	15.4	15.5	15.9
Ավելացված արժեքի հարկ	7.0	6.6	6.2	8.3	7.9	7.3	7.5
Շահութահարկ	1.3	1.1	1.7	1.7	1.2	1.8	2.5
Եկամտահարկ	0.9	1.0	1.1	1.0	1.2	1.3	1.4
Ակցիզային հարկ	2.6	2.4	2.1	3.0	2.9	2.7	2.1
Պաշտոնական տրանսֆերտներ	1.2	0.6	0.5	0.7	0.4	0.5	0.3
Ընդամենը պետբյուջեի ծախսեր, այդ թվում	17.3	14.9	15.6	20.3	18.1	17.7	19.5
Պաշտպանություն	2.7	2.7	2.8	3.8	3.5	3.6	3.7
Հասարակական կարգի պահպանություն	1.2	1.2	1.2	1.4	1.4	1.4	1.6
Կրթություն և գիտություն	2.1	2.0	2.4	2.3	2.4	2.5	3.0
Առողջապահություն	1.1	1.2	1.3	0.8	1.3	1.3	1.5
Սոց. ապահովագրություն և ապահովություն	1.8	1.8	1.9	2.5	2.1	2.3	2.4
Դեֆիցիտի ֆինանսավորում	0.6	0.5	0.1	0.7	0.2	0.5	0.1

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՁՀ կենտրոնի հաշվարկներ: